«Արթիկի 5-րդ հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի

տեղակալ Ծ.Տոնոյանի

2022-2023 ուստարվա

կատարած աշխատանքների

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

-Տարեսկզբին կազմվել է դպրոցի ուսումնադատիարակչական աշխատանքային պլանի նախագիծը, ներկայացվել է մանկավարժական խորհրդի նիստում, արժանացել է հավանության:

- Հրավիրվել է առարկայական մ/մ խորհրդակցություններ, քննարկվել է նոր ուստարվա փոփոխությունները: Հանձնարարվել է մ/մ նիստերում կազմել աշխատանքային պլանները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

-Մ/մ նիստերում քննարկվել է ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, հաստատվել է տնօրենի կողմից և ներմուծվել matyan.emis.am կայքում:

-Կազմվել է դասացուցակ հանրակրթական ծրագրը իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներին, սանիտարական նորմերին համապատասխան:

-Ուսուցիչներին հանձնարարվել է ներկայացնել ամենօրյա դասապլան հաշվի առնելով առարկայական չափորոշիչային պահանջներն ու վերջնարդյունքները:

- Էլեկտրոնային մատյաններում ուսուցիչների գրանցումները ստուգելու նպատակով ամենամսյա ստուգումներ է իրականացվել, կատարվել անհրաժեշտ դիտողություններ, առաջարկություններ:

- Կատարվել են տարարնույթ և տարանպատակ դասալսումներ , քննարկվել, ներկայացվել առաջարկություններ:Դասալսումների գրառումները կատարվել են համապատասխան մատյանում:

- Կատարվել է բացակա ուսուցիչների հաշվառում, բաց թողնված և փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում:

- Յուրաքանչյուր ամիս անցկացվել են մ/մ նիստեր, քննարկվել տարարնույթ հարցեր, առարկաների դրվածքներ, առարկայական շաբաթներ, լսվել զեկուցումներ:

- Ուշադրության կենտրոնում են եղել սկսնակ ուսուցիչները, որոնց համար կազմակերպվել է մեթոդամանկավարժական օգնություն:

- Ժամանակին կազմակերպվել և անցկացվել է օլիմպիադայի դպրոցական փուլը , քննարկվել են արդյունքները և համապատասխան աշակերտների ցուցակը ներկայացվել է տարածքային փուլին մասնակցելու համար:

- Իրականացվել է ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնառությունը յուրաքանչյուրի համար մշակված ԱՈՒՊ-ի համաձայն:

- Վերահսկվել է ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈՒՊ-ի լրացման, մշակման և իրականացման գործընթացը:

- Վերահսկվել է ուսուցիչների օգնականների աշխատանքը:

- Վերահսկվել է ՏՄԱԿ-ի կողմից գնահատված և վկայագրված ԿԱՊԿ ունեցող սովորողների համար համապատասխան մանկավարժահոգեբանական ծառայությունների կազմակերպման որակը:

- Կատարվել է 9-րդ դասարանի ավարտական քննությունների ցուցակ- հայտերի ճշգրտում:

- Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ստուգվել է ծրագրերի կատարողականը:

- Տնօրենության կողմից տրվել է գրավոր աշխատանք, քննարկվել, ամփոփվել, ներկայացվել մանկավարժական խորհրդի նիստում:

- Աշակերտների ուսումնառությունը գնահատելու նպատակով ԿԳՄՍ-ի կողմից տրվել է գրավոր աշխատանք 3-րդ և 4-րդ դասարաններում:

- Ուսումնական պարապմունքներից 10 օր առաջ մանկավարժական խորհրդի նիստում ներկայացվել է տեղեկատվություն սովորողների բացակայությունների մասին:

- Կազմվել է սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական քննությունների խորհրդատվությունների, քննական աշխատանքները ստուգող հանձնաժողովների և հերթապահության ցանկը:

- Կազմվել և մանկավարժական խորհրդի քննարկման ու հաստատմանն է ներկայացվել 2022-2023 ուստարվա գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների կազմակերպման ու անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը:

-Ամփոփվել է 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման և 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները:

-Կազմվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն հիմնվելով ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների և մեթոդական միավորումների եզրակացության վրա:

Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝Շ.Տոնոյան

Տնօրեն՝Ա.Պետրոսյան